

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

Ս/թ. մայիսին լրացավ Մայր Աթոռի միաբան, Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանի առաջնորդական պաշտոնավարության քսան տարին:

Հոբելյար տ. Տիրայր սրբազանը ծնվել է 1930 թվականի մայիսին Բեյրութում և իր նախնական կրթությունը ստացել է տեղի Սահակյան և ապա Աբգարյան նախակրթարաններում:

1944 թվականին ընդունվել է Երուսաղեմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարան, որտեղ սովորել է մինչև 1947 թվականը՝ հայրենիք վերադարձը: Երևանում մի որոշ ժամանակ օտար լեզուների ինստիտուտի անգլերեն բաժնում սովորելուց հետո, ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան և այն 1952 թվականին մեծ հաջողությամբ ավարտելուց հետո սարկավագ է ձեռնադրվել և 1955 թվականին՝ կուսակրոն քահանա, իր կյանք ու ապագան կապելով Մայր Աթոռի և հայ եկեղեցու ծառայության գործին:

1958 թվականին նշանակվել է Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ, ուր պաշտոնավարել է արժանի բարեջանությամբ:

1960 թվականին ընտրվել է Ռումինիայի ու Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ, պաշտոններ, որոնք նա վարում է ցարդ նվիրումով և արդյունավորությամբ, համերաշխ գործակցությամբ երկու թեմերի թեմական խորհուրդների:

1964 թվականի նոյեմբերին Մայր տաճարում եպիսկոպոս է ձեռնադրվել՝ ձեռամբ Հայոց Հայրապետի:

Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը Ռումինիայում իր օգտակար պաշտոնավարության ընթացքում պարգևատրվել է «Ռումինական Հանրապետության աստղ» շքանշանի 4-րդ աստիճանով:

Տ. Տիրայր սրբազանի օրով ջերմ, բարեկամական հարաբերություններ են պահպանվել հայ և ռումին եկեղեցիների, հայ և ռումին ժողովուրդների միջև:

Տ. Տիրայր եպիսկոպոսը գտնվում է իր

ուժերի և շնորհների ծաղկման ու հասունության շրջանում:

Ճիշտ է վարվել ռումինահայ թեմական խորհուրդը, նախաձեռնելով իր բարեխնամ առաջնորդի պաշտոնավարության 20-ամյակը նշելու բացառիկ հանդիսություններով:

Այս առիթով Ռումինիայի հայոց թեմական խորհուրդը ս/թ. ապրիլի 12-ին գրավոր կերպով դիմել է Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին՝ ստանալու համար Նրա հայրական օրհնությունը ու համաձայնությունը հիշյալ հոբելյանը տոնելու համար:

Վեհափառ Հայրապետը սույն գրությանը պատասխանում է հետևյալ հեռագրով.

ՊԱՏՎԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

Ուրախությամբ ողջունում ենք գերաշնորհ Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանի առաջնորդական գործունեության 20-ամյակը Ռումինիայում, որպես առաջնորդի Ռումինիայի հայոց: Իմաստությամբ և եռանդուն աշխատանքով նա առաջնորդում է ձեր թեմը և ջերմությամբ քարոզում է Աստծո խոսքը, հոգեկան մխիթարություն բաշխելով հավատացյալներին՝ սրբությամբ պահելով Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու կանոններն ու ավանդությունները, մնալով միաժամանակ հավատարիմ քաղաքացին ռումին պետության և ռումին ժողովրդի:

Էջմիածնի մեր սուրբ Աթոռից հղում ենք Տիրայր սրբազանին քաջառողջության ջերմ մաղթանքներ՝ ցանկանալով նրան առավել արդյունավետ գործունեություն և նորանոր հաջողություններ Տիրոջ անդաստանի մեջ:

Տիրայր սրբազանին՝ Մեր ամբողջ սերը, գնահատանքը և հայրապետական օրհնությունը:

Բարի մաղթանքներ և օրհնություններ նաև Ռումինիայի հայոց թեմի հոգևորականաց դասին, թեմական խորհուրդին, եկեղեցական վարչություններին և մեր բոլոր հավատացյալներին: Ջերմապես աղոթում ենք ռումինական հայրենիքի խաղաղության, ծաղկման և փառքի համար:

Ողջ լերուք, զորացյալ սուրբ Հոգվով:

Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
12 մայիս 1978 թ.

Տ. Տիրայր եպս. Մարտիկյանի առաջնորդական պաշտոնավարության քսանամյակի հանդիսությունը սկսվել է մայիսի 14-ին, կիրակի օրը, Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցում մատուցված պատարագով:

Սույն պատարագին հարյուրավոր հայ հավատացյալներից բացի ներկա են եղել նաև ռումին և հայ հանրային դեմքեր, մտավորականներ, մամուլի աշխատողներ և արվեստագետներ:

Ս. պատարագի ընթացքում Բուխարեստի հայոց հոգևոր հովիվ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը ներկաներին կարդում է Ամենայն Հայոց կաթողիկոսի վերոհիշյալ օրհնության գիրը:

Հավարտ ս. պատարագի, կեսօրին, Բուխարեստի նորակառույց «Մոդերն» հյուրանոցում տեղի է ունենում հանդիսություն, որին ներկա են լինում Ռումինիայի Տ. Ժուստին Պատրիարքի փոխանորդ տ. Անտոնի եպիսկոպոսը, Ռումինիայի հանրապետության մեջ մահմեդականների Մուֆթի՝ Շեյխ Յագուպ Մոհամեդը, կրոնից նախարարության ընդհանուր տնորեն պրն. Սորին, Բուխարեստի հայոց «Նոր կյանք» շաբաթաթերթի աշխատակիցները և այլ անձինք:

Հանդիսության պաշտոնական բացումը կատարում է Ռումինիայի հայոց թեմական խորհրդի փոխնախագահ դոկտ., պրոֆ. Գրիգոր Փամբուքջյանը, որն իր ելույթի մեջ հանգամանորեն ներկայացնում է տ. Տիրայր եպիսկոպոսի քսանամյա առաջնորդական առավել արդյունավետ գործունեությունը:

Ռումինիայի եկեղեցու գահակալի անունից ողջույնի խոսք է ասում տ. Անտոնի եպիսկոպոսը, Ռումինիայի մահմեդական համայնքի կողմից՝ Մուֆթի Շեյխ Մոհամեդը:

Ռումինիայի պետական իշխանության անունից հանդես է գալիս, շնորհավորական ջերմ խոսքով, պրն. Սորին, որը հայտնում է իր մեծ համակրությունը՝ «Յոթ առիթներով հանրապետության շքանշան-

ներով պարգևատրված գործի և խոսքի հոգևոր մարդ» տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանին:

Հանդիսության փակումից առաջ խոսքը տրվում է հոբելյար սրբազանին:

Բոլոր ներկաներին ջերմորեն ողջունելուց հետո, առաջնորդ սրբազանը իր որդիական շնորհակալությունները ու երախտագիտությունն է հայտնում Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Նրա այն մեծ վստահության համար, որ է նման կարևոր թեմի առաջնորդության հանձնումը իրեն: Նման թեմի ղեկավար լինելու պատասխանատվության գիտակցությամբ էլ առաջնորդ սրբազանը վստահեցնում է բոլոր ներկաներին, որ ինքը այսուհետև ևս պիտի աշխատի նույն ժրաջանությամբ և ոգով՝ ի պայծառություն Հայաստանեայց եկեղեցու՝ լինելով անկեղծ բարեկամը ռումին ժողովրդի և ռումին եկեղեցու:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է հոբելյար առաջնորդ սրբազանին, մաղթելով նրան քաջառողջություն և կորով նույն նվիրվածությամբ և ոգով ծառայելու համար Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցուն: